



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30745
Մարտ 10, 1989

Արժանաշնորհ
Տ. Արշէն Բննչ. Այվազեան
Հովի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ֆէրմն.

Սիրելի Տէր Արշէն,

Ստացած ենք Փետրուար 27, 1989 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր
նախագահութեամբ Փետրուար 19-ին գումարուած համայնքի Ծխական Ժողովին մէջ կատարուած
է Ծխական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան
արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ
տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց
անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք
յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ա. Եկեղեցոյդ եւ ի հոգեւոր
շինութիւն համայնքի մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունի

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Զարլզ Փինաճեան
Ծէն Ռօյլընտ
Ռէքս Խաչիկեան
Մարթին Գարոյեան
Տոբթ. Բնարիկ Խաչատուրեան
Տոբթ. Պերճ Ֆէրճեան